Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ստուգված

Ռուս գրականություն, Արձակ, Նովել

13+

Թարգմանիչ՝ Արշավիր Խոնդկարյան

Անտոն Չեխով

Քամելեոն

Շուկայի հրապարակով անցնում է ոստիկանական վերահսկիչ Օչումելովը նոր շինելը հագին և մի կապոց բռնած: Նրա ետևից քայլում է կարմրահեր ոստիկանը մաղը ձեռքին, որ մինչև բերան լցրել է բռնագրաված հաղարջով: Շուրջը լռություն է… Հրապարակում ոչ մի շունչ չկա… Խանութների ու գինետների բաց դռները վիատված նայում են լույս աշխարհին, կարծես սոված բերաններ լինեն: Նրանց մոտ մինչև իսկ մուրացիկներ էլ չկան:

— Ա՜, կծում ես հա՜, անիծված,— լսում է հանկարծ Օչումելովը: Բռնե՜ք դրան, տղե՜րք: Հիմա արգելված է կծելը: Բռնե՜ք: Ա՜… ա:

Շան կաղկանձ է լսվում: Օչումելովը շուռ է գալիս և տեսնում է, թե ինչպես առևտրական Պիչուգինի փայտի պահեստից մի շուն է փախչում՝ երեք ոտի վրա լընգի տալով ու ետ-ետ նայելով: Շան ետևից մի մարդ է վազում օսլայած չթե շապկով ու չկոճկված ժիլետով: Նա վազում է շան ետևից և, ամբողջ մարմինը առաջ գցելով, վայր է ընկնում գետնի վրա ու բռնում շան ետևի ոտներից: Նորից լսվում են շան կնձկնձոցն ու «բռնեք» աղաղակը: Խանութներից դուրս են նայում քնկոտ դեմքեր և շուտով փայտի պահեստի մոտ, կարծես գետնից բուսած, բազմություն է հավաքվում:

— Անպատճառ անկարգություն է տեղի ունեցել, ձերդ ազնվություն…— ասում է ոստիկանը:

Օչումելովը շուռ է գալիս դեպի ձախ և քայլում հավաքված բազմության կողմը: Նա տեսնում է, որ պահեստի դռների մոտ կանգնել է վերոհիշյալ չկոճկված ժիլետով մարդը և, աջ ձեռքը բարձրացրած, իր արյունլվա մատն է ցույց տալիս բազմությանը: Նրա կիսարբած դեմքի վրա կարծես թե գրված է. «Հետո հոգիդ կհանեմ, անզգամ»: Մատն էլ հաղթության նշանի տեսք ունի: Օչումելովն իսկույն ճանաչում է, որ այդ մարդը ոսկերիչ Խրյուկինն է: Բազմության մեջտեղում առջևի ոտները չռած ու ամբողջ մարմնով դողալով նստած է գետնին հենց ինքը սկանդալի հերոսը՝ սպիտակ սրադունչ քերծե

շնիկը, մի դեղին բիծ մեջքին: Նրա արտասվաթոր աչքերում վշտի ու սարսափի արտահայտություն կա:

— Այս ի՞նչ պատճառով եք այստեղ,— հարցնում է Օչումելովը՝ բազմությունը ճեղքելով:— Ինչո՞ւ եք այստեղ: Դու ինչո՞ւ ես մատդ տնկել... Ո՞վ էր գոռում:

— Գնում էի ես, ձերդ ազնվություն, ոչ ոքի ձեռք չէի տալիս...— սկսում է Խրյուկինը՝ բռունցքի մեջ հազալով.— փայտի մասին պիտի խոսեի Միտրիյ Մատրիչի հետ,— հանկարծ այս գարշելին առանց որևէ պատճառի մատս բռնեց... Դուք ինձ ներեցեք, ես աշխատող մարդ եմ... Իմ գործը մանրազնին աշխատանք է պահանջում: Թող ինձ վճարեն, որովհետև, շատ կարելի է, մի ամբողջ շաբաթ ես չկարողանամ այս մատս շարժել... Այդ բանը, ձերդ ազնվություն, օրենքում էլ չկա, որ մեզ կենդանիները վնաս հասցնեն... Եթե ամեն մեկն սկսի կծել, ավելի լավ է իսկի չապրել աշխարհի երեսին...

— Հը՛մ... Լա՛վ...— խստորեն ասում է Օչումելովը հազալով և հոնքերը շարժելով:— Լա՛վ... Ո՞ւմ շունն է: Այս գործն այդպես չեմ թողնի: Ես ձեզ ցույց կտամ, թե ինչ է նշանակում շներին արձակ թողնել: Ժամանակն է վերջապես ուշադրություն դարձնել այդ կարգի պարոններին, որոնք չեն հպատակվել եղած կարգադրություններին: Երբ տուգանեն այդ անպիտանին, այն ժամանակ նա կսովորի ինձնից, թե ինչ է նշանակում շունն ու մյուս թափառող անասունները: Ես նրան կծանոթացնեմ կարգ ու կանոնի հետ... Ելդիրին,— դառնում է վերահսկիչը ոստիկանին,— իմացի՛ր, այդ ում շունն է և արձանագրություն կազմիր: Իսկ շունը պետք է ոչնչացնել: Անհապաղ: Անպատճառ կատաղած է... Ո՞ւմ շունն է այս, հարցնում եմ:

— Դա կարծես թե գեներալ Ժիգալովինն է,— ասում է մեկը բազմության միջից:

— Գեներալ Ժիգալովի՞նը: Հը՛մ... Ելդիրի՛ն, վերցրու վերարկուս... Սաստիկ շոգ է: Երևի անձրև պիտի գա... Մի բան չեմ հասկանում. ինչպե՞ս կարող էր «այդ շունը քեզ կծել,— դիմում է Օչումելովը Խրյուկինին:— Մի՞թե նրա դունչը կարող է քո մատին հասնել: Չէ՞ որ նա փոքր է, իսկ դու տես, թե ինչպիսի՛ հսկա ես: Դու երևի մեխով ես մատդ քչփորել, իսկ հետո գլխումդ միտք ես հղացել, որ մի բան պոկես: Դու ախր... ձեր ցեղը հայտնի է: Ճանաչում եմ ձեզ, անպիտաններիդ:

— Հա, ձերդ ազնվություն, ծիծաղելու նպատակով ծխախոտը շան դնչին մոտեցրեց, իսկ շունն էլ հո անխելք չէր, հա՛փ, կծեց... Անպետք մարդ է, ձե՛րդ ազնվություն:

— Սուտ ես խոսում, միաչքանի՛: Որ չես տեսել, էլ ինչո՞ւ ես սուտ խոսում: Նորին ազնվությունը խելոք պարոն է և շատ լավ է հասկանում, թե ո՞վ է սուտ խոսում և ո՞վ խղճով, ինչպես աստծու առաջ... Իսկ եթե ես սուտ եմ խոսում, թող հաշտարար դատավորը դատի: Նրա օրենքում ասված է... Հիմա ամենքն էլ հավասար են... Հենց իմ եղբայրս էլ ժանդարմ է... եթե ուզում եք գիտենալ...

— Ո՛չ մի դատողություն:

— Ո՛չ, սա գեներալի շունը չէ...— խորիմաստ շեշտով նկատում է ոստիկանը: Գեներալն այսպիսի շներ չունի: Նրանն ավելի որսի շներ են...

— Դու այդ հաստա՞տ գիտես:

— Հաստատ, ձե՛րդ ազնվություն...

— Ես ինքս էլ եմ իմանում: Գեներալի շները թանկագին են, ազնիվ ցեղից, իսկ սա սատանան գիտե, թե ինչ է: Ոչ մազ ունի, ոչ տեսք... մի կատարյալ գարշելություն է և ուրիշ ոչինչ... Բա այսպիսի շունն էլ պահե՞ն... Ես ձեր խելքին ինչ ասեմ... Այսպիսի շունը եթե Պետերբուրգում կամ Մոսկվայում պատահի, գիտե՞ք, թե ինչ կանեն: Այնտեղ այլևս չեն նայի, թե օրենքն ինչ է ասում, այլ անմիջապես՝ կսատկացնեն: Դու, Խրյուկին, տուժել ես և այս գործը այդպես մի թողնի... Պետք է մի լավ դաս տալ: Ժամանակն է...

— Բայց կարող է պատահել, որ գեներալի շունն է... լսելի կերպով միտք է անում ոստիկանը:— Ախր դնչի վրա հո գրված չէ՞... Անցյալ օրը նրանց բակում ես այսպիսի մի շուն տեսա:

— Իհարկե գեներալինն է,— ասում է մի ձայն բազմության միջից:

— Հը՛մ... Հապա՛, եղբա՛յր Ելդիրին, վերարկուս մի վրաս գցիր... Կարծես քամի փչեց... Մրսում եմ... Դու այս շունը կտանես գեներալին և կհարցնես: Կասես, որ գտա ուղարկեցի... Եվ ասա՛, որ նրան բաց չթողնեն փողոց... Գուցե թանկագին շուն է, և եթե ամեն մի խոզ սրա պնչի մեջ ծխախոտ ճխտի, իհարկե շուտով կփչանա: Շունը քնքուշ արարած է... Իսկ դու, ապուշ, ցած թող ձեռքդ: Կարիք չկա, որ հիմար մատդ ամենքին ցույց տաս: Ինքդ ես մեղավոր...

— Ահա գեներալի խոհարարը գալիս է, նրան հարցնենք... Է՛յ, Պրոխո՛ր: Եկ այստեղ, սիրելի՛ս: Նայիր շանը... Ձե՞րն է:

— Ա՛յ, հնարեցիր հա՛: Այդպիսի շուն մենք երբեք չենք ունեցել:

— Եվ այստեղ երկար հարցնելու էլ կարիք չկա,— ասում է Օչումելովը: Սա անտեր շուն է: Եվ երկար խոսելն էլ ավելորդ է... Երբ ես ասացի անտեր է, կնշանակի անտեր է... Պետք է ոչնչացնել, և ուրիշ ոչինչ:

— Այդ մերը չէ,— շարունակում է Պրոխորը:— Այդ գեներալի եղբոր շունն է, որ այս քանի օրս է եկել: Մեր գեներալը չի սիրում քերծեներ: Եղբայրը սիրում է...

— Բայց մի՞թե նրա եղբայրը եկել է: Վլադիմիր Իվանի՞չը,— հարցնում է Օչումելովը, և նրա ամբողջ երեսը ողողվում է սրտառուչ մի ժպիտով: Տեսա՞ր, տե՛ր իմ աստված: Իսկ ես չեմ էլ իմացել: Հյո՞ւր է եկել:

— Հյուր...

— Տես է՛, աստված իմ... Կարոտել է եղբորը... Իսկ ես իսկի չգիտեի էլ: Այս ուրեմն նրանց շո՞ւնն է: Շատ ուրախ եմ... Վերցրու... Բավականին լավ շնիկ է... Շատ կայտառն է... Հա՛ֆ, բռնել է սրա մատը: Հա՛-հա՛-հա՛... Էհ, ի՞նչ ես դողում: Ռռռ՛... Ռռ՛... Բարկանում է անիծվածը... ցուցի՛կ...

Պրոխորը կանչում է շանը և միասին հեռանում են փայտի պահեստից... Բազմությունը հռհռում է Խրյուկինի վրա:

— Ես դեռ քեզ հետ գործ կունենամ,— սպառնում է նրան Օչումելովը և, փաթաթվելով շինելի մեջ, շարունակում է իր ճանապարհը շուկայի հրապարակով:

1884